

1.2.4. Շինարարություն

Բնակարանային շինարարություն: 2004թ. հունվարին հանրապետությունում բնակչության միջոցների հաշվին շահագործման է հանձնվել 4270 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 23 նոր բնակելի շենք կամ 2003թ. հունվարին գործարկված մակերեսի 179.9%-ը: Մասնավորապես. Արարատի տարածաշրջանում՝ 200 և 1, Նաիրիի՝ 938 և 1, ք.Վանաձորում՝ 132 և 1 և ք.Երևանում՝ 3000 քառ.մ , 20 բնակելի շենք:

Շահագործման հանձնված բնակելի շենքերի աճի տեմպերը

	2003			2004		
	ընդհանուր (օգտակար) մակերեսը, քառ. մետր	%		ընդհանուր (օգտակար) մակերեսը, քառ. մետր	%	
		նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ		նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ
Հունվար	2374	79.4	3.3	4270	179.9	7.1

2004թ. հունվարին շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր (օգտակար) մակերեսի 100%-ն ամբողջությամբ շահագործվել է բնակչության միջոցների հաշվին (2003թ.՝ 100%):

Իրականացված շինարարության ծավալը: 2004թ. հունվարին հանրապետությունում իրականացվել է 2782.1 մլն.դրամի շինարարություն, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 1297.6 մլն. դրամի, իրականացված շինարարության ծավալում շինմոնտաժային աշխատանքները կազմել են 2142.0 մլն.դրամ, որից արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 735.5 մլն. դրամ:

Իրականացված շինարարության հիմնական ցուցանիշներն ըստ ֆինանսավորման աղբյուրների, 2004թ. հունվարին

Ֆինանսավորման աղբյուրներ	Իրականացվել է շինարարություն, մլն.դրամ (ընթացիկ գներով)	այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքներ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ, %		Ընդհանուրի նկատմամբ, %	
			իրականացվել է շինարարություն	այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքներ	իրականացվել է շինարարություն	այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքներ
Ընդամենը ՀՀ	2782.1	2142.0	91.0	74.2	100	100
<i>այդ թվում՝ ի հաշիվ՝</i>						
պետական բյուջեի	429.5	417.1	69.1	68.7	15.5	19.5
համայնքների միջոցների	3.6	3.6	35.0	36.0	0.1	0.2
Ջարգացման և վերականգնման եվրոպական բանկի վարկի	32.8	32.8	-	-	1.2	1.5
Համաշխարհային բանկի վարկի	421.1	394.3	182.8	190.4	15.1	18.4
մարդասիրական օգնության միջոցների	0.1	0.1	0.0	0.0	0.0	0.0
<i>դրանից՝</i>						
«Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցների	0.1	0.1	0.5	0.5	0.0	0.0
կազմակերպությունների միջոցների	834.2	294.5	2.9անգամ	164.6	30.0	13.7
բնակչության միջոցների	1060.8	999.6	200.0	189.4	38.1	46.7

Իրականացված շինարարության ծավալները

	2003			2004		
	իրականացվել է շինարարություն, մլն.դրամ (ընթացիկ գներով)	համադրելի գներով, %		իրականացվել է շինարարություն, մլն.դրամ (ընթացիկ գներով)	համադրելի գներով, %	
		նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ		նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ
Հունվար	2972.7	156.2	9.4	2782.1	91.0	8.9

2004թ. հունվարին իրականացված 2782.1 մլն.դրամի շինարարությունը 2003թ. հունվարի համեմատությամբ նվազել է 9%-ով: Եթե շինարարության աճի տեմպերի հաշվառման ժամանակ բացառել 2003թ. հունվարին «Լինսի» հիմնադրամի միջոցների հաշվին իրականացված շինարարական աշխատանքների ծավալը, ապա 2004թ. հունվարին շինարարական աշխատանքների տեմպը կկազմեր 160.5%, շինմոնտաժային աշխատանքների՝ 135.3%:

Շինարարության ծավալներն ըստ տնտեսական գործունեության տեսակների, 2004թ. հունվարին

	Իրականացվել է շինարարություն, մլն.դրամ (ընթացիկ գներով)		Ընդհանուրի նկատմամբ, %	
	ընդամենը	այդ թվում շինմոնտաժային աշխատանքներ	իրականացվել է շինարարություն	այդ թվում շինմոնտաժային աշխատանքներ
Ընդամենը ՀՀ	2782.1	2142.0	100	100
<i>այդ թվում.</i>				
գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն	48.4	33.6	1.7	1.6
մշակող արդյունաբերություն	111.0	45.6	4.0	2.1
էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	42.6	34.6	1.5	1.6
առևտուր, ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում	368.9	307.7	13.3	14.4
հյուրանոցներ և ռեստորաններ	49.6	49.6	1.8	2.3
տրանսպորտ և կապ	756.7	344.0	27.2	16.0
անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում	803.4	803.4	28.9	37.5
պետական կառավարում	123.1	63.9	4.4	3.0
կրթություն	33.8	33.8	1.2	1.6
կոմունալ, սոցիալական և անհատական ծառայությունների մատուցում	444.6	425.8	16.0	19.9

Վերանորոգման և վերականգնողական աշխատանքներ: 2004թ. հունվարին հանրապետությունում Համաշխարհային բանկի միջոցների հաշվին ք. Երևանում վերանորոգվել է 2111 աշակերտական տեղով 3 հանրակրթական դպրոց:

Շինարարությունն աղետի գոտում

Բնակարանային շինարարություն: 2004թ. հունվարին *երկրաշարժից տուժած* քաղաքներում և գյուղական վայրերում բնակչության միջոցների հաշվին շահագործման է հանձնվել 132 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով մեկ բնակելի շենք կամ հանրապետությունում գործարկված մակերեսի 3.1%-ը:

Շահագործման հանձնված բնակելի շենքերի աճի տեմպերը

	ընդհանուր (օգտակար) մակերեսը, քառ. մետր	2003		ընդհանուր (օգտակար) մակերեսը, քառ. մետր	2004	
		%			%	
		նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ		նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ
Գունվար	354	62.2	0.9	132	37.3	9.1

2004թ. հունվարին շահագործման հանձնված բնակելի շենքի ընդհանուր (օգտակար) մակերեսի 100%-ն ամբողջությամբ շահագործվել է բնակչության միջոցների հաշվին (2003թ. 100%):

Իրականացված շինարարության ծավալը: Հանրապետության աղետի գոտում 2004թ. հունվարին բնակելի շենքերի, սոցիալական և արտադրական նշանակության օբյեկտների շինարարության, վերականգնման և վերանորոգման համար ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացվել է 206.4 մլն.դրամի շինարարություն կամ հանրապետությունում շինարարության ընդհանուր ծավալի 7.4%-ը, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների շինարարության գծով՝ 179.8 մլն. դրամ (13.9%):

Իրականացված շինարարության հիմնական ցուցանիշներն ըստ ֆինանսավորման աղբյուրների, 2003թ. հունվարին

	Իրականացվել է շինարարություն, մլն.դրամ (ընթացիկ գներով)		Ընդհանուրի նկատմամբ, %	
	ընդամենը	այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքներ	իրականացվել է շինարարություն	այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքներ
Ընդամենը	206.4	206.4	100	100
<i>այդ թվում ի հաշիվ.</i>				
պետական բյուջեի	152.3	152.3	73.8	73.8
համայնքերի միջոցների	0.3	0.3	0.1	0.1
Համաշխարհային բանկի վարկի	21.2	21.2	10.3	10.3
մարդասիրական օգնության միջոցների	0.1	0.1	0.0	0.0
<i>դրանից.</i>				
«Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցների	0.1	0.1	0.0	0.0
կազմակերպությունների միջոցների	14.4	14.4	7.0	7.0
բնակչության միջոցների	18.1	18.1	8.8	8.8